

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ». Հրատարակութիւն Մ. Բարխուդարեանցի:
Մօսկա. 1888 թ.

Այս հրատարակութիւնը, որը խոստանում է դառնալ պարբերական, այն է՝ վեց-ամսեակ, որպէս պէտք է ենթադրել, ծնունդ է առել նման գաղափարից, որպէս և «Մուրճ» ամսագիրը: Ի հարկէ բոլոր միւս կողմերից համեմատութիւնը այդ երկու հրատարակութիւնների մէջ կը լինէր անտեղի: Պ. Բարխուդարեանցի «Հանդէսը» լոկ գրական ընտելութիւն ունի և ներկայացնում է մի ժողովածու զուտ գրական-վիպական-բանաստեղծական աշխատութիւնների: Այս բոլորին միզ հետաքրքրողը այդ առաջին հատորի բովանդակութիւնը չէ. նորա մէջ կան գրածներ, որ գրական արժանաւորութիւն ունին, կան որ մեծ արժէք չեն ներկայացնում: Մեզ համար գլխաւոր խնդիրը այդ հրատարակութեան ապագան է, որը կախած է նորանից, թէ մասնաւորապէս ի՞նչ ընտելութիւն պիտի կրէ «Հանդէս»-ը, որպէս զի կոչւած համարւի մեր գրականութեան մէջ մի պակաս որդ լրացնելու: Արդ, այդ խնդիրը լուծելու համար, պէտք է իմանալ, թէ մեր աշխարհի հրատարակութիւնները ի՞նչ բանին բաւականութիւն չեն տալիս և չեն էլ խոստանում տալու մօտ ապագայում. միմիայն պակասը լրացնելով կարող է մի հրատարակութիւն ընդհանուրի ուշադրութիւնը գրաւել և համակրութիւն գտնել հասարակութեան կողմից: Մի հրատարակութիւն պակաս է լրացնում նաև այն ժամանակ, երբ մինչև անգամ նման հրատարակութիւններ կան, բայց որոնք խմբագրական պակասութիւններ են ներկայացնում և որոնք ցանկացած ոգով չեն ներշնչւած: Գրական իրար հակառակ չիօլաների բացակայութեան պատճառով հալերիս մէջ, պէտք է կարծել որ «Հանդէս»-ը կոչւած չի կարող համարւել քարոզելու մի ալ գրական ուղղութիւն, քան ինչ ներկայացնում են մեր բոլոր հայկական թերթերը, որտեղ անխտիր տպւում են ամեն տեսակ գրական ուղղութեան գրածներ: Իսկ «Մուրճ»-ի երևան գալով վճռուում է առհասարակ մի ամսագիր ունենալու խնդիրը: Ուրեմն նաև այդ կողմից «Գրականական

Հանդէս»-ը կորցնում է իւր նշանակութիւնը: Կարծել, թէ մի ամսագիր, որպէս «Մուրճ»-ը, չի կարող բաւականութիւն տալ բոլոր գրողների պահանջներին՝ տեղի սղութեան պատճառով, դորա դէմ էլ կարելի է ասել, որ «Մուրճ»-ը դատապարտած չէ հրատարակելու ամիսը 8—10 թերթով, այլ որ նա կարող է մեծանալ մինչ 16 թերթ, միայն թէ լինին բաւականաչափ բաժանորդներ:

Բայց չը նալած այդ բոլոր առարկութիւններին, պ. Բարխուդարեանցի «Գրականական Հանդէս»-ը մեր աչքում ունի գոյութեան կատարեալ իրաւունք, քանի որ նա կարող է լրացնել մի մեծ պակասութիւն և քանի որ այդ պակասութիւնը գրեթէ ոչնչով չեն լրացնում մեր բոլոր պարբերական հրատարակութիւնները և ո՛չ իսկ «Մուրճ»-ը: Այդ մեծ պակասութիւնը՝ թարգմանական գրածների բացակայութիւնն է մեր պարբերական մամուլի մէջ, մամուլի, որին օգնութեան հասնել չի կարողանում մեր մատենագրական-թարգմանական գրականութիւնը: Ինչ վերաբերում է «Մուրճ»-ին, մենք ցաւօք սրտի լալտարարում ենք, որ չը պիտի կարողանանք թարգմանական վէպեր տպել աչն չափով, որ «պակաս» լրացնելու պարծանքը երբ և իցէ ձեռք բերել չուսանք: «Մուրճ»-ը, իւր գրողական բաժնում, գրեթէ բացառապէս պէտք է հիւրընկալէ մեր ինքնուրոյն գրողների գործքերը:

Ահա ուրեմն, պ. Բարխուդարեանցի «Գրականական Հանդէս»-ը, մեր կարծիքով, կարող է պատուաւոր տեղ բռնել հայկական պարբերական հրատարակութիւնների մէջ միմիայն այն ժամանակ, երբ նա իւր գլխաւոր նպատակը չլինէ՝ առաջարկել հայ ընթերցող հասարակութեան թարգմանական գրական ստեղծագործութիւններ: Եւ երբ մարդ մտածում է, որ «Հանդէս»-ը հրատարակում է մեր հայրենի երկրից 5—6 օր հեռու, այն ժամանակ թարգմանութեան ծառայելու նպատակը կրկնակի է թւում պարտաւորիչ նորա համար: Իւր առաջին գրքի մէջ «Հանդէս»-ը, արդէն տալիս է մի քանի թարգմանութիւններ: Մնում է միայն, որ թարգմանութիւնները ապագայում բռնեն նրա մեծագոյն մասը. իսկ եթէ նորա փոքրագոյն մասը ծառայէ խմբագրական և այլ չօղածներին—այդ կը լինէր և օգտակար և ցանկալի:

«ՊԱՏԿԵՐՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱՎԱՆԻ ՀԱՅՈՅ ԿԵԱՆՔԻՅ», — (ԻՄ յիշողութիւններից): Տիգրան Փիրումեանց: Գրքոյկ առաջին: Թիֆլիս, տպարան Մ. Վարդանեանցի, 1888 թ., փոքր թերթ, 4-աճալ, 115 երես. տառ № 10: Գինն է 40 կոպէկ:

Այս գրքոյկը, չառաջաբանից դուրս, պարունակում է երեք պատկեր.
1. Հին Սեբուսդ, 2. Աշխարհի կէսը և 3. Լիմանապատի Գէորդ ճգնաւորը:

Գրքովի մեծ մասը (67 էրես) բռնում է առաջինը, որը և անկասկած ամենից աջողածն է: Պ. Փիրումնանցի գրելու եղանակը բացառիկ է մեր գրականութեան մէջ և, շտապենք աւելացնել, ամենաաջող եղանակներինցն է տիպեր նկարագրելու: «Հին Սերունդ»-ը, նախ քան գրքովի մէջ տեղ բռնելը, տպւոյց 1887 թւականին «Մշակ» լրագրում, որով հեղինակը կատարեալ մի ճաշակ տալ ընթերցողներին իւր ուռածքների մասին, որոնք մի քանի հատոր պիտի կազմէին: «Հին Սերունդ»-ի ընթերցումը մեզ վերադ դեռ ասն ժամանակ ասն տպաւորութիւնն արաւ, որ մենք, առանց տատանման, դեռ ևս աչքօր էլ կը կրկնենք, ասն է, որ 1887 թւականին լոյս տեսած բոլոր գրածներից պ. Փիրումնանցի «Հին Սերունդ»-ը ամենատաղանդաւորն է: «Հին Սերունդ»-ի մէջ հեղինակը պատկերացնում է Վանի «Չրթչինց» մեծանուն տունը, որտեղ երկու դար շարունակ տիրապետել է հին նահապետական ոգին և սրի վերջին նախատիպար ներկայացուցիչն է հաջի Ստեփան աղան: Այդ նահապետականութիւնը արտապարտում է սրտի կատարեալ մաքրութեամբ, բարեխիղճ հետեղութեամբ Սուրբ գրքի մէջ չարտնած բարոյախօսութեան, ամեն բանում երևացող երկիւղածութեամբ Աստուծոյ առջև, ներքին մխիթարութեան զգացմունքով՝ աղքատներին և թուկերին օգնելու ժամանակ, պատկառանքով դէպի մեծերը, սրտի բարութեամբ և ներողամտութեամբ դէպի ուրիշների սխալները, արդար հոգու անդորրութեամբ, անտրտունջ լինելով իւր վիճակից, աննախանձութեամբ դէպի ուրիշը և ասն և ասն:— Հեղինակը ներկայացնում է Ստեփան աղային սորա ութուն-ամեալ ծերութեան ժամանակ, երբ նա արդէն հեռացած էր շուկայի գործերից և երբ ուրեմն նա իւր կեանքը կարող էր վարել բոլորովին համեմատ իւր ցանկութեան, համաձայն իւր ներքին կրօնական հալեացքների: Տաղանդ է պահանջում ներկայացնել մի աղայիսի ծերունու հոգեկան դրութիւնը և տաղանդ՝ աղայիսի մի անվրդով կեանքի համար հետաքրքրել վիպասէր ընթերցողին: Պ. Փիրումնանցը աղէ կատարում է մի ձեռով, որի մէջ մենք ուղիղ նկատում ենք վարպետի գրիչ: Նա հասկանում է ոչ միայն ներկայացնել ճիշտ կերպով, այլ և ստիպել ընթերցողին թափանցել ասն ծերունու հոգեկան աշխարհը, հասկանալ և համակրել նորան: Ընթերցողը մի առ ժամանակ մոռանում է ներկալ աշխարհականութիւնը և ապրում է ասն կրօնական աշխարհում, որի մէջ ապրում էր Ստեփան աղան: Հեղինակը իրաւունք ունի բարձր գնահատել Ստեփան աղայի տիպարը մեր կեանքում, որովհետև աղէ նահապետական մարդը ունէր հաւատ, որից զուրկ էին նորա միւս եղբայրները՝ Պետրոսը և Պողոսը, որոնց կեղծութիւնը և հոգու ծուրթիւնը չէր կարելի աւելի լաւ ցոյց տալ, քան նոցա դէմ չանդիման կացուցանելով Ստեփան աղայի հոգու մաքրութիւնը: Այդ Պետրոս և Պողոս աղաները Ստեփան աղայի եղբայրներն են, բայց սնւած բոլորովին այլ ոգով՝ շահամուտութեան, կեղծաւորութեան ոգով: Ազգատէրներ են, որոնցից և թէ ազգը աղատէր, փրկւած կը լինէր:

Գրքովի կրկու միւս պատկերներէից մէկում ներկայացրած է Չաքար աղալ Կորէժեան անունով ճարպիկ և արիւնարբու մէկը, որը տաճկաց Գատական ատենանի ծառայողի պաշտօնը տասնեակ տարիներով գործ է դնում միմիայն մի նպատակով՝ կաշառք առնել դատարանին դիմող մարդկանցից և, նպատակին սուկի լաւ հասնելու համար, խճճելով բոլոր գործերը, թակարդի մէջ պահելով արդարադատութեան դիմողներին: Նոյն աղ Չաքար աղան դառնում է թաղական խորհրդարանի անդամ հէնց աչն ժամանակից, երբ 1860 թականի Սահմանադրութիւնը ներմուծեց Վասպուրական, այն է 70 թականներէից. աղ պաշտօնում, միշտ վերընորելով, Չաքար աղան մնում է ամբողջ 12 տարի: Իբրև ազդեցիկ մարդ, նա ընտրւում է նաև իւր թաղի եկեղեցու երեսփոխ և «աշխատ լսակեց, կողպտեց եկեղեցու դրամները, որ քիչ էր մնում նրա սուրբ սպասներն էլ ծախէր»: Եւ աղ մարդը ամեն օր ժամ էր գնում ու ջերմաջլում աղօթում...

Աղ փոքրիկ պատմութեան վերջը կաղմում է խօսակցութիւն Վիմար, բայց և մեծամիտ մէկի հետ՝ վախճանւած Չաքար աղալի չղարկաւորութեան ժամանակ: Պ. Փիրումնանցը չէր կարող իւր արհամարանքը դէպի հանդուցեալ հարստահարողի դադաղը աւելի ուժեղ կերպով լալտնել, քան իւր պատմութեան վերջում մոռանալով նորան և զբաղելով աղ հոսոս երիտասարդի հետ, որին վանցիք անուանում էին «Աշխարհի կէտ», աչքան նա «գիտուն» էր: Բայց անհասկանալի է, թէ ինչու աղ պատկերը պէտք է կրէր աղ պատահական չղարկաւորողի մականունը:

Երբորդ պատկերում, որ կրում է վերնագիրս «Վիմ անապատի ճգնաւորը», հեղինակը առաջ է բերում Մանուկ աղալ անունով շատախօս մարդու մի տիպար, Վասպուրականի գիւղական ուսուցչի դրութեան մի նկարագրութիւն չանձին Մեքքոն վարժապետի և վերջապէս Վիմ անապատի վստեն տարի առաջ վախճանւած Գէորդ ճգնաւորի մասին փողովրդի բերնում պտըտող աւանդութիւնը

Քանի մի խօսք ևս հեղինակի լեզուի մասին: Ենթարկելով տաճկահաւերի բարբառի ազդեցութեան և գտնելով նորա մէջ ինչ ինչ առաւելութիւններ, հեղինակը մշակել է մի լեզու, որ և լալս և լալնկոյս Ախուրեանի գրական լեզուները իրար հետ շողկապում է: Աղպէս է, որ նա գործ է ածում՝ մարդու մը, աղալի մը, զի, զորս, հարցուցի և ալչն, ալ նաև՝ պ ա ղ խ օ ս ա կ ց ու թ ի լ ւ ն և ալչն: Մենք համուզած ենք, որ աղ դարձւածները և առհասարակ բարբառների իրար հետ աղ ձևով խառնելը հեղինակը ինքը կը թողնի ոչ ի վնաս գրական լեզուի զարգացման: Յամենայն դէպս պէտք է թողնել զորս, դալնս և նման խորթութիւնները: Բայց և միւս կողմից մենք համուզած ենք, որ հաղիւ թէ պ. Փիրումնանցի լեզուն ներկայացնէր աչն ճոխութիւնը և զեղեցիկութիւններից շատերը, եթէ նա քանի մի տարի անցրած չը լինէր հայրութեան սրտին մօտիկ մի քաղաքում, որպիսին է Վանը:

Քամալեանց Ս. «ՄՈՎԻՆԱՐ» (Հէքիաթ): Տիփսիս, տպարան Ռօտինեանցի, 1888 թ. ութածալ, 79 էրես, տառ № 12. Գինն է 20 կոպէկ:

Մեր գրականութիւնը, քանի ժամանակից ի վեր, սկսել է հարստանալ ժողովրդական հէքիաթներով: Այդ հէքիաթները երկու ձևով են առաջարկուում հասարակութեան՝ որպէս հում նիւթ և որպէս գրականապէս մշակած ժողովրդական բանաստեղծութիւն: Ներկայումս, մեզ մօտ, առաջին տեսակի մէջ գլխաւոր աշխատողն է պ. Տիգրան Նաւասարդեանցը, երկրորդ տեսակի մէջ մինչև այժմ փառելի է պ. Ղազարոս Աղապեանցը՝ պատմող «Անահիտ» և «Տորք Անգեղ» հէքիաթներէ: Պ. Տ. Նաւասարդեանցը, որպէս կատարեալ բերան ժողովրդի, մեզ հաղորդում է ժողովրդի պատմածը, առանց մի կէտ անդամ փոխելու եղածի մէջ. նա նիւթ է տալիս բանաստեղծին, գիտնականին, բանաստեղծին. պ. Աղապեանցը լսածը կամ կարդացածը փոփոխում է, որպէս նորա գեղարվեստական ճաշակը թեւադրում է, ժողովրդական հէքիաթը դարձնում է բանաստեղծի շօրինւածք և մտցնում նորան գեղեցիկ գրականութեան մէջ:

Պ. Քամալեանցը, իւր «Մովինար»-ով, տալիս է մի հէքիաթ այդ վերջին տեսակից: Գա մի պատմութիւն է՝ սկզբում աղամարդու դիմակով մի «հրաշք» թաղաւորապէս աղջկայ, որը սարսափ է տարածում ամբողջ տիեզերքի վերայ, չաղթում է և անինչազ կոտորում նորա հետ մրցութեան զուրս եկողներին: Աղջիկը որոնում է քաջ աղամարդու, որ նորան մարդու գնալ, բայց իւր լալ և զ մարդ չի գտնում: Հայրը չուսահատուած՝ նորան ներում է մի աղբի, որի դրախտանման սիրունութիւնը ամեն քաջ իշխանի կարող էր հրապուրել՝ այն նւաճելու համար: Աղջիկը, ամենայն իրիկնադէմ, իւր հրեղէն ձին նստած, ամպերի վերայ խաղալով, գալիս էր իր դրախտանման ազգուն աղբուլութեան: Գալ ու գնալու ժամանակ նորա ահուլի «ծղրատոցից» սար ու ձոր դղրդում էր, դեկըր որսերը թողնում փախչում էին: Ախար չէ՞ որ Մովինարը ոչ այլ ինչ է, և թէ ոչ կայծակը: Բայց անհ, այդ աղբին մտնելու խիղախում է նաև Միծիկղար անունով երիտասարդ իշխանը, որը Մովինարի մասին լսած է լինում և այլուում թէ նորա հետ կուգի մտնելու և թէ նորան չաղթելու և նորան կնիկ ուզելու: Առանց սակաչման խմանալու թէ ո՞ւմ հետ է կուում, Միծիկղարը կուգի մտաւ նորա հետ, որպէս իւր երկու եղբայրներին սպանողի հետ: Բայց կուգի միջոցին Մովինարի դիմակը ընկնում է և Միծիկղարը, որը միայն այդ աղջկայ ուժի մասին էր լսել, կարողացաւ հիանալ նորա գեղեցկութիւնով, այնպէս որ, վրէժը թողած, ընկնում է նորա վտակից՝ նորան ձեռք բերելու համար: Սրկար ճաղած, ընկնում է նորա վտակից՝ նորան ձեռք բերելու համար: Սրկար ճաղած, խմբերի հետ, նա վերջապէս հասնում է Մովինարի հօր մարտաքաղաքը, խմբերի հետ, նա վերջապէս հասնում է Մովինարի հօր մարտաքաղաքը, ձիւտ այն ժամանակ, երբ Մովինարը զուրս է գալիս այն բոլոր իշխանազն

տղերանց շարքը նախելու, որոնք եկած էին նորա ձեռքը խնդրելու: Շարքի ծայրում գալիս-կանգնում է բողոքովին ըստ պատշաճին չը զուգած Միծիկղարը, որին, ի հարկէ, միակ հաւանում է Շովինարը և նորա հետ ամուսնանում: Միծիկղարի ուժը կալանում է ևղել իւր չարգանքի մէջ դէպի իւր նախնիքը, որոնցից և ժառանգում է նոցա սուրբ: Այդ գաղտնիքը սատանաօրէն գտնում է մի դիւական պառաւ կին (պառիկ), որին չաջողում է Շովինարի աչքում կասկածելի դարձնել Միծիկղարի սէրը և փախցնել խալնդուր թագաւորի տղի մօտ, որը պատահամբ Շովինարի պատկերը տեսած էր և նորա վերաջ գծւած: Բաւց ալդ բանը խմացում է. Շովինարին չաջողում է կրկին իւր մարդու գիրկը հասնել, իսկ պառիկը չարաչար պատժւում է:

Ամբողջ հէքիաթը պատմած է մի լեզուով, որը գրական ոճի հետ միացնում է ժողովրդական բարբառի բոլոր հրաշալի հարստութիւնները թէ՛ բառերով և թէ՛ դարձածներով: Արձակի հետ խառը կան շատ կտօշ ոտանաւորներ չարմարեցրած հէքիաթի բնաւորութեան և բաւականին աջողած, թէպէտ և պ. Աղապեանը մեզ ընտելացրել է լաւագոյնին:

Հեղինակը չի ասում մեզ, թէ արտեղից է քաղել իւր հէքիաթը, միայն թէ հէքիաթի մի տեղից (երես 57) խմանում ենք, որ դա՛ Ուտիացոց (որոնցից ալժմ Նուխաւ գաւառի Նիթ և Վարթաչէն մեծ գիւղերի բնակիչներն են մնում) հէքիաթ պէտք է լինի, քանի որ Միծիկղար ուտիորէն նշանակում է «կրտսեր տղա» և որ ալդ երկրի «Գէօլուր-ղալա» կոչւած աւերակներին կից Ղղղալախի (Աղջկարերդ) կոչւած տեղ կալ. «Խալնդուր» անունից էլ երևում է, որ ալդ ճիշտ ենթադրութիւն է, քանի որ խալնդուրցիք հնումը լեզգի կամ ալ լեռնարնակներին էին անուանում, որոնք մօտ են Ուտիացիներին: Մենք խորհուրդ ենք տալիս մեր հէքիաթարաններին գրածքի ըսկըղրում չարտնել պատմած հէքիաթի աղբիւրը և թէ պատմածը որքան հաւատարիմ է ժողովրդական աւանդութեան: Այդ խմանալը հարկաւոր է աւելի քան մի տեսակէտից:

Շովինարի նման հակալ ուժի տէր էակի «ձղրտալը» աչքի ընկնելու չափ անբնական է թւում: Եթէ Շովինարը կաջճակն է՝ նորա ձալնը՝ որոտմունքը—չի կարելի ձղրտալուն նմանեցնել:

Միծիկղարի սիրապատմութիւնը Շովինարին (երես 26)

«Թէ որ դու ես քուս կտրող Շովինար,
Աղջի, ես եմ սիրուլդ կարօտ Միծիկղար»

հասկանալի է լինում միմիայն երես 33 կարգաւորով:—Գեղերի խմբերի նկարագրութիւնը թւում է մեզ շատ աջողած, նա մանաւանդ որ նոքա երկիւղալի չեն դուրս բերւած:

Բաւց և ալնպէս, մի թեթեւ սրբագրութիւն ևս, ապագայի համար, աւելորդ չէր լինիլ: Ամենևին հարկ չը տեսանք սահմանի տեղ՝ ս ա Ր հ ա տ ասել

(եր. 5 և շարուն.), աղբիւրի տեղ՝ աղբուրի (18 և շարուն.) և այլն: Նկատենք, որ թշնմը (թէկուզ պառակի) չեն լապուոսում (եր. 34): Մի փոքրիկ բառարան էլ աւելորդ չէր լինել: համաձայն-ւեցէք, որ ամեն մի հալ պարտական չէ իմանալ, թէ թո՞ւր՝ անձ-րեն է, որ աշխարհքի տուտը՝ աշխարհքի ծալքն է, որ լամուկ՝ լակոտ է նշանակում և այն էլ «թուրքի» լակոտ, որ տարսը՝ տարիքն է, որ բախ-րան՝ եղջերուն է կամ մարալը:

Մեծ հաճոյք կը դզան ընտանիքներում, եթէ մի հայր, մի մայր վերց-նեն և կարդան այդ հէքիաթը 10—14 տարեկան երեխաների մօտ: Յար-մարաւոր նկարներ՝ շատ իրանց տեղում կը լինէին:

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՅ: ՕՐԱՅՈՅՅ 1889 թւականին Քրիստոսի և աղ-գային ՌՅԼԸ—1338 (երրորդ տարի): Թիֆլիս. տպարան Յ. Մար-տիրոսեանի. 16-աժալ, 383 երես, տառ. № 10. զինն է 20 կոպ.

Բացի օրացուցներին չատուկ բովանդակութիւնից, այս օրացուցը ունի մի «Յաւելւած», որի մէջ մտնում են բազմազան տեղեկութիւններ (Առաջին մասն)՝ վերաբերեալ դպրոցական տօներին, երկրագնդի ընդհանուր վիճա-կագրութեան, աշխարհագրութեան, լրագիրների, դրամների, Ռուսաց կա-սերական տան, Ռուսաստանի բնակիչներին, կովկասի և Անդրկովկասի մի քանի տեղերի աշխարհագրական դիրքին: Նրկորդ մասը բովանդակում է տեղեկութիւններ՝ վերաբերեալ հաղորդակցութեան միջոցներին: Նրբորդ մասը ժամանակագրութիւն է համաշխարհային պատմութեան ամե-նանշանաւոր անցքերի, Հայոց պատմութեան, սուրբերի և հին հայոց թագաւորների: Նոյն այդ մասում կալ ցուցակ նշանաւոր օրերի՝ կովկասի և Անդրկովկասի վերջին 100 տարուալ պատմական կեանքից: Չորրորդ մասը տալիս է տեղեկութիւններ Հայոց հինգ թեմերի կրթական գործի մասին: Հինգերորդ մասում զետեղւած է մի տեղեկատու Թիֆլիսի մասին, թէ ան-ցեակից և թէ ներկալից, նորա այժմեան վարչական կազմով և հիմնարկու-թիւնների մասին տեղեկութիւններով հանդերձ: Վեցերորդ մասը խօսում է առողջատարական կանոնների մասին. եօթներորդ մասը պարունակում է մի ցուցակ արական և իգական անունների, մուրհակի օրինական կարգը, մի ոտանաւոր Սիւլվակի և ցուցակ՝ կազմողի անցեալ տարուալ օրացուցի բո-վանդակութեան:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, պ. Յ. Նաղաբեանցի Օրացուցը լիքն է տեղեկութիւններով, որոնք ամենաչն դէպքում մարդուս հարկաւոր են և, այդ կողմից, նա բարձր է ուրիշ շատ օրացուցներից: Բաց նոյն իսկ այն պատճառով, որ մենք ցանկանում ենք այդ օրացուցի տա-րածելը ժողովրդի մէջ, մեզ վերալ անախորժ տպաւորութիւն արաւ այն-

տեղ զետեղած (երես. 5—6) «Էֆեմերայի գուշակութիւնը 1889 թւականի համար»։ Յոյս ունինք, որ հետեւեալ տարիներում պ. Նազարեանցը այդ բաժինը իւր Օրացոյցից բոլորովին դուրս կը գցի, համաձայնելով մեզ հետ, որ թէ՛ այդ և թէ՛ նման գուշակութիւնները ոչ միայն գիտութեան, այլ և նոյն խակ հալի, առողջ դատողութեան բարի համբաւի համար վիրաւորական են։—Տօմարագիտութեան չը նւիրած ընթերցողին անհասկանալի է երես 7 զետեղած տառերի և բառերի նշանակութիւնը։ Երես 87—88 թւանշանները անհաստատ են և մի քանիսը սխալ. օրինակ, իբր թէ 1000 հոգոց մէկը հասնում է 100 տարեկան հասակին։ Եւ առհասարակ, իբր ստատիստիք, այդտեղ բերած թւանշանները զին չ'ունին։ Փոխանակ ընդհանուրից խօսելու, աւելի օգտակար կը լինէր ճիշտ թւեր բերել ստատիստիքագլէս հետազօտած աղբեղի կեանքից։—Երես 99-ում հալ Լուսաւորչականների թիւը որոշում է 634 հազար հոգի, խակ նկատողութեան մէջ ասում է, թէ «վերջին վիճակադրական տեղեկութիւններից երևում է, որ Ռուսիայի հայոց թիւը այժմ հասնում է 1 միլլիոնի»։ Իսկ ինչ թիւ է առաջինը և ռոտեղից է վերցրած երկրորդը։—Երես 175-ում Ադամի մահը որոշում է 4578 թ. Քր. առաջ, որպէս Ջրհեղեղին՝ 2253 թ. մինչդեռ ամենքի համար արդէն պարզ է, որ այն պատմութիւնը, որի մէջ Ադամը և Ջրհեղեղը կարող են պատմական եղելութիւնների տեղ ընդունել, այլ ևս պատմութիւն չէ և ոչ նորա հեղինակը՝ պատմաբան։—Օրացոյցի «առողջապահական բաժինը» սկսում է ոչ ոքին հարկաւոր դատողութիւններով, թէ ինչ է ասել ջրի մասին Հիպոկրատէս, Պինտարոս և այլն։ Դորա փոխարէն մենք սպասում էինք գտնել Օրացոյցի մէջ տեղեկութիւններ ջրի քիմիական և ֆիզիքական բաղադրութեան մասին, անգամ Կուր գետի և Աւշալաչի ջրի՝ վերջերում եղած անալիզների հետեւնքի մասին. խակ զինու վերաբերեալ հաղարապատիւ աւելի օգտակար կը լինէր Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան մէջ վերջերումս եղած ուսումնասիրութեան մի ամփոփ ու լումաստալի գեկուցում տալ։

Պարոն Նազարեանցի աշխատասիրութեան բարի համբաւից սպասելի է որ ժամանակով, նորա կազմած Օրացոյցը նկատողութիւնների ոչ մի սուիթ չի ներկայացնի։ Օրացոյցի կազմելուն զբաղած է տեսնում իրան նոյն խակ գիտնականը և մանաւանդ լուսաւորութիւն տարածել ցանկացողը, այնքան ճիշտ է, որ ոչ մի գիրք այնքան խուլ անկիւններ չի տեսնում, որքան Օրացոյց ասած բանը։ Ահա թէ ինչո՞ւ օրացոյցները պէտք է աւելի բարձր տեսակէտից քննել, քան այդ սպասելի է նոյցա փոքր չաւալից և նոյցա, առ երևոյթ, անմեղ կերպարանքից։

Վիլիամ Ե քսպիր. «ԶՈՒՐ ՏԵՂԸ ՄԵՆ ԱՂՄՈՒԿ». (կատակերգութիւն հինգ գործողութեամբ). գերմաներէնից հայերէն թարգմանեց Յովհաննէս Լալայեան: Թիֆլիս. տպար. Յ. Մարտիրոսեանցի, 1888 թ., քառածալ, 111 էրես, տառ № 12. Գինն է 50 կոպ.

Հակական բեմը ծանօթ է Եւքսպիրի հետ. նորա վերայ խաղաղած են Համլետ, Օթելլօ և Արքայ Լիր: Բայց հակական գրականութիւնը դեռ ևս գրեթէ ծանօթ չէ նոր դարերի այդ հզօրագուն հանձարի թատերական գրածներին հետ. և եթէ չենք սխալում, պ. Մալխասեանցը առաջինն է, որ աւելց Եւքսպիրից մի տպագրած թարգմանութիւն, այն է՝ Արքայ Լիր ողբերգութիւնը «Արաքս» վեցամսեակ հրատարակութեան մէջ: Մեր գրականութեան բարեկամներին կարող ենք հաղորդել, որ Եւքսպիրի թարգմանութեամբ զբաղւած է նաև մի երկրորդը, իւր այդ գործի համար կատարեալ ձևոճը հաս հայ գրող՝ պ. Աւետիք Եղեկեան-Պրոլեան, որի «Համլետ» ձևագիր թարգմանութիւնը աւելի քան մի անգամ կարդացած ենք կամ նորա ընթերցումին ներկայ եղած և որի հրատարակութիւնը, կարող ենք վստահ կերպով ասել, գրական նորութիւն պէտք է դառնի, երբ նա լոյս ընծայի:

Բայց ահա Եւքսպիրի նաև մի երրորդ թարգմանիչ—Յովհաննէս Լալայեան, որը ախօր հրատարակ է դալիս վերը լիշած կատակերգութեան թարգմանութեամբ: Եւ այդ առաջին փորձով պ. Լալայեանը կատարելապէս հաստատում է այն կարծիքը, ինչ ունէինք նորա գրական-գեղարւեստական ճաշակի մասին: Մեզ համար մեծ գին ունի այն հանգամանքը, որ մէկը ձեռնամուխ է լինում մի գրածքի թարգմանութեան՝ բնական հակումով, ունենալով իւր իսկ բնաւորութեան մէջ չատկութիւններ, որոնք գրաւում են նորան դէպի որոշ հեղինակութիւններ: Պ. Լալայեանցը, որքան մենք նորան ճանաչում ենք, սիրում է գեղարւեստը նոյն իսկ գեղարւեստի համար, որտեղ և այդ գեղանիութիւնը արտաշատուի՝ նրկարչութեան թէ անդրիպարծութեան մէջ, վէպի թէ կարբիկատորի մէջ, վեհութեան թէ ծամածութեան մէջ: Թարգմանիչների մէջ նա կուսածներին է, թէպէտ և հանգամանքները նորան դեռ ևս թող չեն աւած իւր ձիրքը կատարելապէս արտաշատելու: Նոյնքան սիրով մենք ողջունում ենք նորա այդ դեռ ևս ոչ մեծ գործի թարգմանութիւնը:

Բայց և այնպէս, մի նկատողութիւն: Ինչ մտքը ունի այժմեան աշխարհաբարի դարում գործ ածել գրաբարի բողոքովին աւելորդ ձևերը, քանի որ մեր աշխարհիկ լեզուն ունի նոցա տեղ իւր սեպհականը, մեզ աւելի մատչելին և նոյնքան կատարելալը: Ինչու որք և ոչ՝ որոնք, ինչու ազնուականք և ոչ՝ աղնականներ. բնական է, որ պէտք է ասել՝ խօսիք և ոչ թէ՛ խօսէ (եր. 19), զինով և ոչ՝ զինուով, բարեկամներ և ոչ՝ բարեկամք, կ'առնես և ոչ՝ կ'առնուա: Փոխանակ կուսեցան, հաշտուցան, լցուցան,

պէտք է գրել՝ կուսցին, լցեցին, հաշուեցին: Նմանապէս անհիմն է ասելը՝ սպասածէն աւելի. սխալ է գրելը՝ դրաբառ (պէտք է գրել՝ դրաբար):

Մի վերջին նկատողութիւն ևս. Մեզ մօտ ո՞վ իւր եղբօրը ալսպխի հարց կը տալ՝ «որտեղ է եղբօր որդիս»: Մեզ մօտ եղբօր ներկաութեամբ եղբօր որդի ասելու տեղ, ուղղակի նորա անունն են տալիս՝ որտեղ է Յովհաննէսը և այլն, փոխանակ ասելու՝ որտեղ է «եղբօր աղջիկս» (խակապէս՝ եղբօրս աղջիկը), ուղղակի հարցնում են եղբօր աղջկալ անունը:

ՍԱՄՈՒԷԼ ՍՄԱՅԼՍ. «ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ»: Գերմաներէնից թարգմանեց Փիլիպպոս Վարդանեան. Թիֆլիս. Մարտիրոսեանցի տպարան. 1888 թ., 490 եր., տառ № 12., գինն է 1 ռ. 50 կոպէկ:

Վերնագրից ընթերցողը կարող էր եղբակացնել, թէ Սմալսը գերմանացի է. որպէս զի ալսպխի թիւրիմացութեան տեղիք չը տրւի, թո՛ղ ընդունւի ալսպխի մի ձև՝ (քնազիրը անգլիերէն) — Գերմաներէնից թարգմանեց այս ինչ անձը: Ալսպխիով ճշտութիւնը պահպանւած կը լինէր, որ ինքն ըստ ինքեան կարևոր է:

Բնաւորութիւնը մի գիրք է, որը միմիայն մի անգլիացի բաւականաչափ հեղինակութիւն կարող էր ունենալ գրելու: Ոչ մի ազգ անքան գործ չի չինել ընաւորութեան շնորհիւ, որքան անգլիացին և, այդ իսկ պատճառով, ոչ մի ազգ անքան ընաւորութեան տէր մարդիկ չի ունեցած, որքան անգլիականը: Լսել ընաւորութեան մասին՝ պէտք է ուրեմն անգլիացուց, որպէս ճաշակի մասին՝ ֆրանսիացուց: Եւ ընական է, որ Սմալսի հեղինակութեան մէջ օրինակները գլխաւորապէս վերցրած են Անգլիայի մարդկանցից: Այդ գիրքը դաստիարակութեան մի գիրք է՝ այլ ձևով գրած, քան դաստիարակութեան մասին առհասարակ զրածները, օրինակ՝ Ժան Ժակ-Ռուսօն, Հերբերտ Սպենսեր և ուրիշներ: Նորա մէջ չը կալ ոչ անալիզ և ոչ պինտեղ, այլ կալ միայն խրատ, պնդումն, հաստատումն՝ հեղինակաւոր մարդկանց վկայութիւններով վաւերացրած: Այդ պատճառով աղղեցութիւնը Սմալսի ընթերցումից անքան մնալուն չէ, որչափ փիլիսոփայօրէն գրած դաստիարակութեան գրքերի աղղեցութիւնը: Սմալսից բոլոր օգուտը ստանալու համար, նորան հարկաւոր է ոչ թէ կարդալ և անցկենալ, այլ նորան տնային գրադարանի մշտական սեպհականութիւն դարձնելուց և մի անգամ կարդալուց չետո՛ղ՝ ժամանակ առ ժամանակ վերցնել և կրկին ու կրկին կարդալ և ոչ անպատճառ սկզբից, այլ ո՛ր տեղերը մարդու դիրքին, բովանդական տրամադրութեան և զէպքին չարմարում են: Բանը նորանունն է, որ այդ գիրքը, ան ձևով, ինչպէս նա շարադրւած է և այն ոճով, որով գրւած է՝ ժամանակակից գրականութեան դասական գրքերից մէկն է կազմում և ուրեմն՝ մէկը ան գրքերից, որոնց թարգմանութիւնը պարտաւորիչ է դառած բոլոր զարգացած ազգերի գրականութիւնների համար:

Հեղինակի գլխավոր ցանկութիւնը սա է՝ որ մարդիկ, ինչ գործի և կոչումի տէր և լինին, ամենից առաջ պէտք է կրթին իրանց բնաւորութիւնը համեմատ աչն պահանջների, որ անհրաժեշտ են դարձնում ընտանիքի սրբութիւնը, հասարակութեան անդամներին համերաշխութիւնը, տէրութեան քաղաքացիութիւնը: Կարճ խօսած, զիրքը քարոզում է առաքիլութեան քաղաքացիութիւնը և լարութիւն, առանց հերքելու ոչ գիտնականութիւն, սրտի աղնութիւն և լարութիւն, առանց հերքելու ոչ գիտնականութեան և ոչ մտաւոր ու այլ ձիրքերի օգտակարութիւնը, որպէս նաև հարստութեան ուժը, բայց որոնք առանց առաքիլութեան՝ իրօք որ քիչ արժէք ունին, և նոյնքան օգտակար կարող են լինել, որքան և վնասակար: Պարտաճանաչութիւն—ահա աչն գլխավոր բանը, սրի շուրջը պէտք է պտտէ կեանքը, նամանաւանդ, որ ազդ չատկութեամբ կարող է փալել թէ մեծը և թէ հասարակ մարդը:

Սմալսը մի առ մի խօսում է աչն բոլորի մասին, որոնք մարդուս բնաւորութեան վերաջ ազդեցութիւն ունին՝ ընտանիքը, ընկերութիւնը, աշխատանքը, արիւնթիւնը, անձնիշխանութիւնը, պարտքի և շիտակութեան գիտակցութիւնը, լրջմտութիւնը, վարտողութեան ձևերը և արեւտը, գրքերի ընթերցանութիւնը, ամուսնութեան ազդեցութիւնը և, վերջապէս, կենսական փորձը:

Թարգմանութիւնը, արւած լինելով լեզուն գլխացող և իւր հակումներով կոչումն ու գրական ճաշակ ունեցող թարգմանչից, որը արդէն անուն ունի վատտակած մեր գրականութեան մէջ՝ ինչ ասել կ'ուզէ, որ լաւ է: Բայց մենք չենք հաւանում չարգելի թարգմանչի հակումը դէպի մի քանի գրարարեան ձևերը՝ օրինակ մեծ աւ մասսամը, ընտանեաց մէջ և այլն:

Ստացանք Արքունական կալւածների մինխտրի հաւատարմատար Կովկասեան երկրի համար պ. գաղտնի խորհրդական Իւան Իւանովիչ Տիլէեւից նորա հրատարակած այս երկու մեծ հրատարակութիւնները. «Материалы по изучению быта государственныхъ крестьянъ въ Закавказскомъ краѣ» եօթը մեծ հատորներից բաղկացած և «Сводъ матеріаловъ по изучению экономическаго быта государственныхъ крестьянъ Закавказскаго края» չորս համանման մեծ հատորներից բաղկացած:

Առաջին հրատարակութեան վերնագրի թարգմանութիւնն է՝ «Նիւթեր Անդրկովկասեան երկրի արքունական գիւղացիների տնտեսական դրութիւնը ուսումնասիրելու համար»:

Երկրորդ հրատարակութեան վերնագրի թարգմանութիւնն է՝ «Անդրկովկասեան երկրի արքունական գիւղացիների դրութեան վերաբերեալ նիւթերի համազումար»:

Պէտք է ասած, որ այս սքանչելի հրատարակութիւնները միմիայն սակաւաթիւ մարդկանց և հատատութիւնների սեպհականութիւն են, ո-

րովհետեւ, ցաւելով պէտք է ասենք, այդ հատորները տպագրւած են միմիայն մի քանի հարիւր օրինակի. Եւ եթէ ալօր մենք այդ գրւածների աէրն ենք, զորա համար շնորհապարտ պէտք է լինինք ալն հանգամանքին, որ ինքներս եղած-ենք հետազօտող մասնախմբի անդամ եւ, որպէս աղպլիսին, վալելիցիներ ձրի կտանալու արտօնութիւնը: Մախու նորա չկան ոչ մի տեղ: Այս նշանաւոր հրատարակութիւնների մէջ ամփոփւած նիւթերի մասին խոստանում ենք հետեւալ անգամ տեղեկութիւն տալ, որպէս նաև՝ թէ ինչ դրատարութիւնների է հետեւի արքունական կալւածների մինխտորի հաւատարմտարը՝ ձեռնարկելով մի աղքան մեծածախս գործի:

Վերջին ժամին ստացանք հետեւալ հրատարակութիւնները:

- 1) Տիրբան Նաւասարդեանցի «Հալ ժող. հէքիաթների» դ. գիրքը:
- 2) Կրօնական—Բարդալիան Խորհրդածութիւններ՝ աստուածաբնութեան, աւաքինութեան եւ բարեգործութեան եռանդ արծարծելու համար: Թարգմանեց զերմաներէնից Գրիգոր եպ. Աղափիրեանց: Հատոր բ., վաղարչապատ, 1888 թ.
- 3) Նոյնը՝ հատոր գ. վաղարչապատ 1888 թ.:
- 4) Քնարիկ մանկական. երգեր, պարերգեր եւ աղօթքներ փոքրահասակ մանուկների համար. ձայնաղրեց Վաղարսա քահանայ Յովսէփեան: Ս. Պետերբուրգ, 1887 թ.
- 5) Երախապրէք. 1882—1887, (պատկերաղարդ), Հատուածներ մանուկների համար: Աւաջին գիրք—դարուն. հրատարակութիւն Կամսար Տ. Մ. Սարգսեանի. Թիֆլիս. 1887 թ., տպար. Ռօտինեանցի:
- 6) Նոյնը՝ երկրորդ գիրք—ամառ. 1887 թ.
- 7) Նոյնը՝ երրորդ գիրք—աշուն: 1888 թ.
- 8) Նոյնը՝ չորրորդ գիրք—ձմեռ. 1888 թ.
- 9) 1837—1887. Յիւնամեակ Հայոց հողեր թեմական դպրոցի Երևանալ, Տփլիս, տպարան Մ. Վարդանեանի, 1888 թ.
- 10) Մ. Արեղեան—Նմուշներ. Եուշի. 1888 թ.
- 11) Պատկերաղարդ Օրացոյց 1889 թ. կաղմեց Մ. Չմշկեանց. հրատարակութիւն «Աղբիւր» անտագրի:

Ա.